«ՇԻՐԱԿԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ

Վերապատրաստող կազմակերպություն

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Գյումրու Ակադեմիական վարժարան ՊՈԱԿ

Առարկա՝ Պատմություն

Թեմա՝ Արժեքների համակարգի ձևավորման խնդիրները «Հայոց պատմության» դասերին:

Ուսուցիչ՝ Փիլոսյան Սամվել

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն----------3-5

Գլուխ առաջին: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրները ----------6-8

Գլուխ երկրորդ: Արժեքային կրթության գործընթացի կազմակերպումը----------9-15

Եզրակացություն----------16-17

Օգտագործված գրականության ցանկ----------18

Ներածություն

<u>Մեր հետազոտության թեման է՝</u> Արժեքների համակարգի ձևավորման խնդիրները «Հայոց պատմության» դասերին: Դաստիարակությունն ու կրթությունը բոլոր ժամանակներում եղել և մնում են մարդկության պատմության ու զարգացման հիմքը: Յուրաքանչյուր պետություն ունի դաստիարակության իր սկզբունքները, որոնք առանձնանում են մյուսներից: Յուրաքանչյուր ազգ և ընտանիք կրթում և դաստիարակում է երեխաներին այնպես, որ ունենա կայուն ապագա, որ հետագայում այդ երեխաները կարողանան ստեղծել ամուր պետություն, պահպանեն ազգային արժեքներն ու արարեն նոր բարիքներ: Ինչպես գիտենք, յուրաքանչյուր ազգ ունի իրեն բնորոշ բարոյական արժեքներ և նորմեր և դրանք փոխանցվում են սերնդեսերունդ: Բարոյական նորմերն այն արժեքներն են, որոնք օգնում են անհատին ապրել հասարակության մեջ ու դառնալ դրա մի մասնիկը՝ չխանգարելով մյուսների ազատությանը, միևնույն ժամանակ չսահմանափակելով սեփական ազատությունը: Բարոյական նորմերը ստեղծվում են տասնյակ տարիների ընթացքում ու ամրապնդվում ազգային ինքնագիտակցության մեջ: Դրանց պահպանումը կարևոր խնդիր է յուրաքանչյուր ազգի համար: Այսպես, ժամանակների հոլովույթի մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից և ապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը: Առանց հայոց պատմության իմացության անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլև նրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտածն ու ստեղծածը, նրա ոգին ու հոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է:

Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցությունն ու մտածողությունը, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին, գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին:

Թեմայի նպատակն է.

- ուսումնասիրել «Հայոց պատմություն» առարկայի դասերին բարոյականության դաստիարակության խնդիրները:

- համակարգել ուսուցչի կատարած աշխատանքը այդ ուղղությամբ:

- խթանել հետաքրքրությունը տվյալ խնդիրների նկատմամբ:

- բարելավել դաստիարակության մեթոդների կիրառությունը պատմության դասերին:

- կիրառել նախկինների փորձը՝ համապատասխանեցնելով ներկայիս խնդիրներին:

Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել կրթադաստիարակչական մի շարք կարևոր **խնդիրներ.**

1. Սովորողներին զինել հին, միջնադարի, նոր և նորագույն ժամանակների հայոց պատմության ամբողջական գիտելիքներով, որոնց միջով կարմիր թելի պես պետք է անցնի ազատության, անկախության, պետականության ստեղծման և ամրապնդման համար պայքարին սեփական մասնակցությունը բերելու գաղափարը: Այդ գիտելիքները մեծապես կօգնեն հասկանալ ու իմաստավորել հայ ժողովրդի անցյալն ու ներկան, դասեր քաղել պատմությունից: Հայոց պատմության խոր և համակողմանի իմացությունը կօգնի մեր հանրապետության ապագա քաղաքացիներին կապվելու մայր հողին, տեր կանգնելու հայրենի տուն ու տեղին:

2. Ցույց տալ ազգային-ազատագրական պայքարի հերոսական դրվագները, 44 – օրյա պատերազմի, 4-օրյա պատերազմի հայ ժողովրդի խիզախ ու քաջարի զավակների անձնազոհ սխրանքները, որոնք օրինակ կդառնան սովորողների համար, կոգեշնչեն նրանց և կմղեն հայրենիքին անմնացորդ նվիրվելու գործին:

3. Գաղափար տալ հայ մշակույթի, քաղաքակրթության, նրա առաջացման ու զարգացման օրինաչափությունների, առանձնահատկությունների մասին: Ծանոթացնել հայ ժողովրդի մշակութային արժեքների ու համամարդկային նվաճումների հետ:

4. Նպաստել մարդասիրության և սոցիալական արդարության ոգով տոգորված ժամանակակից ազատ ու գիտակից անհատի և քաղաքացու ձևավորմանը:

5. Չնավորել սեփական գործունեությունը հանդուրժողականության և մարդու իրավունքների, ինչպես նաև համամարդկային բարոյական սկզբունքներին համապատասխան կառուցելու պահանջմունք և կարողություն։

Գլուխ առաջին: Սովորողների արժեքային համակարգի ձևավորման խնդիրները

Յուրաքանչյուր էթնիկ մշակույթի անբաժան տարրերն են սոցիալական նորմերն ու ավանդույթները: Ավանդույթներն ունեն երկակի բնույթ: Ավանդույթներն առաջանում են սերունդների փորձից և ժամանակի ընթացքում դառնում են կարծրացած պատկերացումներ:

Այսօր մեր հասարակությունը գտնվում է քաղաքակրթության երկու ձևաչափերի տիրույթներում՝ ավանդական, որը հակված է պահպանել և ուղղակիորեն վերարտադրել դարերի ընթացքում կուտակված փորձը, և տեխնոգեն, որը պահանջում է մեծ արագությամբ հարմարվել կյանքի արագ ռիթմին, որտեղ տարածական կեցությունը՝ բազմաթիվ ցեղային փոխհարաբերություններով և պարտականություններով, փոխարինվում է իրավիճակային կողմնորոշումներով, որտեղ արժեք է դառնում ազգային ինքնավարությունը [1, էջ 184-185]:

Հազարամյակների ընթացքում հայ ժողովուրդը ճակատագրի բերումով իրեն բաժին ընկած հայրենիքում ձևավորել է համակեցության նորմեր, որոնց մի մասը նրա անաղարտ ազգային մղումների արգասիքն է եղել, մյուսները՝ նրա այլ ազգերի հետ ունեցած ընդհանրությունների թելադրանքներն են, երրորդները պարտադրվել են պատմական տարբեր ժամանակաշրջաններում գերիշխող մշակույթների կողմից՝ ուղղակի կամ անուղղակի: Այդ նորմերի մի մասը կաղապարվել է որպես էթնիկ մշակույթի բաղադրամաս, ավանդականացել է և գործել: Որոշ նորմեր ժամանակի ընթացքում դուրս են մղվել կենցաղից և մոռացվել:

Դարերի ընթացքում մեր ժողովրդի պատմական ուղին իր հարազատ արժեքներից նկատելի շեղումներ է ունեցել պետականության կորստի, օտար բռնակալական ճնշումների հետևանքով:

Այսօր մենք զարգացման նոր ուղի ենք ընտրել: Այս ուղին իր հռչակված արժեքներով շատ հարազատ է մեզ, սակայն վերջին հարյուրամյակների շեղումները

և ընթացիկ դժվարությունները լուրջ խոչընդոտներ են հարուցում այդ արժեքները մեր կյանքում կիրառելու համար։

Արժեքային համակարգի ձևավորման հիմքը մենք պետք է տեսնենք հենց այս համամարդկային արժեքներում։ Երեք հիմնական արժեքները՝ ճշմարտությունը, բարությունը և գեղեցկությունը համապատասխանում են մեր գոյության երեք ֆունկցիաներին՝ գիտակցությանը, կամքին և զգացմունքներին։ Գիտակցության շնորհիվ մենք կարողանում ենք տեսնել և գնահատել իրականությունը, զգացմունքների օգնությամբ՝ արձագանքել գեղեցկությանը, իսկ կամքն օգնում է մեզ ապրել համընդհանուր բարիքի համար։

Հասարակության մտածողության փոփոխության գործում մեծ դեր ունի հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառումը։ Ինֆորմացիոն աշխարհն իր բոլոր դրսևորումներով ազդում է մարդու արժեքային համակարգի, արժեքային կողմնորոշումների ու դիրքորոշումների, նպատակների ու ցանկությունների, երազանքների ու իդեալների ձևավորման, մարդկային փոխհարաբերությունների կառուցման վրա։

Յուրաքանչյուր էթնոսում վարքի և սովորույթների ձևերը ամրապնդվում են մարդկանց սովորություններում և դառնում ավանդույթներ։ Էթնիկական ավանդույթները երկար կյանք ունեն և փոխանցվում են սերնդեսերունդ։ Դրանք շատ կարևոր են էթնոսի համար և մի շարք ֆունկցիաներ են կատարում։

Եթե որևէ էթնոս ունի իր կենսագործունեության որոշակի ոլորտներ ծածկող ավանդույթներ, ապա այդ ոլորտները երկար ժամանակ պաշտպանված են մնում օտար ազդեցություններից։ Ավանդույթը էթնոհոգեբանական և վարքային համակարգ է, և տեղորոշված լինելով անհատների և խմբերի մեջ, դիմադրում է այն ուժերին, որոնք կարող են քայքայել իրեն։

Բարոյական դաստիարակության մեթոդների ընտրությունը մեծապես կախված է աշակերտների տարիքային առանձնահատկություններից։ Բարոյական դաստիարակության մեթոդների բնույթը նույնպես փոխվում է՝ կախված նաև երեխաների մտածողության զարգացման տեսանկյունից։ Եթե կրտսեր դպրոցականների միջավայրը դեռ հստակորեն ձևավորված չէ, մանկավարժը բոլոր երեխաների համար ներկայացնում է հաստատուն և կատեգորիկ պահանջներ։ Հենց որ ուսանողը սկսում է համագործակցային աշխատանք դրսևորել դասարանում,

մեթոդաբանությունը պետք է փոխվի: Այս առումով կրտսեր դպրոցականների բարոյական զարգացման գործընթացը պետք է համարել որպես անհատականության հուզական-զգայական և մտավոր-ռացիոնալ ոլորտները զարգացող գործողությունների հոգեբանամանկավարժական մեթոդների աստիճանական նվաճում, որն ապահովում է հուզականորեն փորձառու և էթիկական ընդունված չափորոշիչներով վարքագծի զարգացում: Այս ամենը պահանջում է հստակ նույնականացում դպրոցականների բարոյական դաստիարակության գործընթացը կազմակերպելու հոգեբանական և մանկավարժական սկզբունքների վերաբերյալ, որոնք հիմնված են աշակերտի երկկողմանի դիրքի վրա: Կազմակերպված գործընթացի արդյունավետությունը կախված է այդ դիրքերի փոխազդեցության բնույթից, որի ընթացքում անհրաժեշտ է ապահովել այնպիսի շարժում, որը զարգացնում է երեխայի բարոյական դաստիարակության հիմքերը:

Գլուխ երկրորդ: Արժեքային կրթության գործընթացի կազմակերպումը

Բարոյական կրթության գործընթացի կազմակերպման ամենակարևոր հոգեբանական և մանկավարժական սկզբունքը դրա հետևողական փուլն է: Յուրաքանչյուր փուլի ընթացքում հիմնված են նաև նրա կրթությունն ապահովող սկզբունքներն ու մեթոդական մոտեցումները՝ մարտահրավերներին համապատասխան:

Առաջին փուլում, երբ աշակերտի սուբյեկտիվությունը համեմատաբար փոքր է, ուսուցիչը ձգտում է առաջացնել նրա հետաքրքրությունը բարոյական գիտելիքների նկատմամբ, նպաստել անհատի բարոյական ձգտումների և կարիքների զարգացմանը: Նա դրան հասնում է դպրոցականների ուսումնական հագեցվածության լայն շրջանակի օգնությամբ՝ խաղի մեջ նրանց ընդգրկման, վարժությունների, արտացոլման, երկխոսության փոխազդեցության, գործունեության այլ ձևերի կիրառմամբ [5, стр. 52]:

Երկրորդ փուլում, երբ կա ընդլայնում կրտսեր դպրոցականի անհատականության զարգացման ոլորտում, անհրաժեշտ է նրանց հուզական ոլորտի զարգացումը փոխկապակցել բարոյական արժեքների ուսուցման վրա: Բարոյական զգացողությունը և գիտակցությունը՝ որպես միջնորդ կապեր կրտսեր դպրոցականների հաղորդակցության և շփման մեջ, կհանգեցնեն երեխաների բարոյական դիրքի ամրագրմանը:

Երրորդ փուլում, հիմնվելով զարգացած բարոյական գաղափարների և զգացումների համակենտրոնացման վրա, ձևավորվում է վարքի առաջացող բարոյական փորձը: Այս փուլում տեղի է ունենում անհատի բարոյական հատկությունների ինքնազարգացում, ձևավորվում և զարգանում են նրա սուբյեկտիվ հատկանիշները:

Չորրորդ փուլը, որն ուղղված է մանկավարժական պայմանների ստեղծմանը բարոյական դաստիարակության համար, հանգեցնում է դպրոցականների մոտ ազատ ինքնորոշման, ինքնագնահատականի, բարոյական ներուժի և այլ հատկանիշների ձևավորմանն ու զարգացմանը:

Բարոյականության դաստիարակության գործում մեծ ներդրում ունի հայրենասիրության դաստիարակությունը, քանի որ իր ծննդավայրի, իր հայրենիքի մասին հոգ տանող և հայրենիքը սիրող պատանին բարոյապես առողջ անձ է մեծանում: Հայրենասիրական դաստիարակությունը սկսվում է դպրոցական գրականության և պատմության դասերից, բայց դրանով չի սահմանափակվում: Երեխաների մեջ հայրենասիրություն սերմանվում է նաև արտադասարանական միջոցառումների միջոցով: Կատարվում են այցելություններ ցուցահանդեսներ, թանգարաններ, կազմակերպվում են թեմատիկ երեկույթներ, մրցույթներ, բացօթյա էքսկուրսիաներ: Հայրենասիրության դաստիարակության լավագույն վայրը դպրոցական թանգարանն է: Լավ է, երբ դպրոցի տնօրինությունը նախապես պայմանավորվածություններ է ձեռք բերում այլ թանգարանների ու հուշասրահների տնօրենների հետ: Նախքան երեխաներին ինչ որ բան սովորեցնելը ուսուցիչն ինքը անձամբ պետք է յուրացնի մատուցվող նյութը, կարդա համապատասխան գրականություն, նախապես այցելի էքսկուրսիայի վայր ու ծանոթանա տեղանքին, որպեսզի կարողանա պատասխանել աշակերտների բազմաթիվ հարցերին:

Պատանիներին հայրենասիրություն սովորեցնելիս հարկ է նրանց մեջ սերմանել սեր դեպի հայրենիքն ու խնամքով լի վերաբերմունք պատմաճարտարապետական հուշարձանների հանդեպ: 5-9-րդ դասարանների աշակերտներին հայրենասիրություն կարելի է սովորեցնել ոչ միայն ներդասարանական դասերի միջոցով, այլև՝ անհատական հանձնարարություններով: Հայրենասիրություն կարելի է դաստիարակել աշխարհագրության, պատմության, բնագիտության, ֆիզիկայի, մաթեմատիկայի և այլ առարկաների միջոցով: Պատանիների մոտ հայրենասիրություն դաստիարակելու համար նրանց կարելի է սովորեցնել հետևյալ թեմաները՝

- Մեր երկրի գիտնականները,
- Մեր քաղաքի ծնունդն ու պատմությունը,
- Մեր դպրոցի պատմությունը,
- Կոնկրետ կազմակերպության պատմություն

Պատմության էջերում ամրագրված անցյալի փորձն ունի ինքնուրույն նշանակություն: Այն, վերստեղծելով մարդկային հասարակության անցյալի

պատկերը, կատարում է սոցիալական հիշողության գործառույթ: Այդ իմաստով պատմությունը մարդկային հասարակության գոյության և հետևողական զարգացման անհրաժեշտ նախադրյալ է: Ոչ մի սերունդ չի սկսում զրոյից: Յուրաքանչյուրը պատմական ասպարեզ է դուրս գալիս՝ այս կամ այն չափով յուրացնելով անցյալի փորձը, և իր հասարակական գործունեությունը կատարելիս հենվում է դրա վրա: Պատմական գիտությունը միջնորդավորված դիրք է գրավում անցյալի և ներկայի միջև:

Պատմական գիտելիքները հոգևոր մշակույթի անհրաժեշտ տարրեր են: Նրանք ստեղծում են այն ելակետերը, առանց որոնց անհնար է հասարակության հետագա առաջընթացը: Կյանք մտնող յուրաքանչյուր սերնդի պատմությունը տալիս է ոչ միայն անցյալի մասին գիտելիքներ, այլև, ինչպես և փիլիսոփայությունը, արժեքներ՝ ներկայում կողմնորոշվելու համար: Պատմականությունը մարդկային հասարակությանը հաղորդում է անհրաժեշտ կայունություն, ինքնավստահություն:

Շատ դեպքերում «պատմություն» գիտությունը համեմատում են մարդու ունեցած անհատական հիշողության դերի հետ: Հիշողությունը կորցրած մարդը, նույնիսկ եթե մնացած ամեն ինչով առողջ է, կորցնում է մարդկային հատկանիշները, քանի որ նա դադարում է իրեն անհատականություն զգալ, կորցնում է իր «ես»-ը: Պատմական հիշողության կորուստն ինքնասպանություն է մարդու և մարդկության համար: Մարդկային հասարակությունը կարող է ինքնագիտակցել՝ միայն ունենալով անցյալի մասին սիստեմատիկ հիշողություն: Ուսումնասիրելով անցյալը՝ մենք ճանաչում ենք ինքներս մեզ [4,էջ 8]:

Հավաքելով, պահպանելով, տարածելով անցյալի մասին կոլեկտիվ հիշողությունները՝ պատմական գիտելիքները շատ դեպքերում ձևավորում են հասարակության հոգևոր մթնոլորտը, պատմական գիտակցությունը, ինչը օգնում է որոշելու մեր տեղը ժամանակի անսահման հոսքում: Պատմական գիտակցության վիճակից է կախված հասարակության կայունությունը, կրիտիկական վիճակները հաղթահարելու նրա կարողությունը: Յուրաքանչյուր հասարակություն անցյալին տալիս է սեփական հարցերը և ինքն իրեն կարող է ընկալել սեփական անցյալի լույսի ներքո:

Ճիշտ է՝ ընդունված է ասել, որ անցյալի հիշողությունը չի կարող լինել անկողմնակալ, այդուամենայնիվ յուրաքանչյուր պատմաբանի պատվի գործն է վեր կանգնել անձնական, հասարակական-քաղաքական նախապատվություններից և հանդես գալ անաչառ քննադատի դիրքերից:

Անցյալի փորձը դարձնելով ժամանակակիցներին հասանելի՝ պատմական գիտությունը կարևոր դեր է խաղում նրանց հասարակական դաստիարակության մեջ: Պատմական գիտությանը ներքնապես բնորոշ դաստիարակչական գործառույթը պայմանավորված է իր առարկայով: Անկախ առանձին պատմաբանների սուբյեկտիվ ցանկություններից ու մղումներից՝ նրանց շարադրած անցյալի փաստերը կրում են դաստիարակչական լիցք, հուզականորեն ազդում են ընթերցողների վրա:

Բոլոր ժամանակներում՝ սկսած անտիկ շրջանից, պատմությանը դիմել են գրականության և արվեստի գործիչները: Նրանց լավագույն ստեղծագործությունները ոգեշնչված են պատմության օրինակներով:

Անցյալի փորձը, որն ամրագրված է ժողովրդի հասարակական հիշողության մեջ, ունի բարձրագույն արժեք և համապատասխան պայմաններում կարող է վերածվել իրական քաղաքական ուժի: Պատահական չէ, որ ժողովուրդների կյանքի շրջադարձային փուլերում մեծանում է նրանց հետաքրքրությունը պատմության նկատմամբ:

Ինչպես նկատել է Օ. Բիսմարկը 1866 թվականի ավստրո-պրուսական պատերազմի մասին, այն շահեցին պրուսական զինվորները, սակայն անգնահատելի է պրուսական դասատուների, հատկապես պատմության դասատուների դերը: Մարդկանց պատմությամբ դաստիարակելը պետք է հիմնվի ոչ թե առանձին ժամանակահատվածների, այլ ողջ պատմական փորձի վրա: Առանց անցյալի հիշողության չի կարող լինել ապագայի տեսլական:

Պատմական հիշողությունը բարոյական վերածննդի աղբյուր է դառնում: Պատմական փորձը դաստիարակում, ոգևորում է ժամանակակիցներին, ակտիվ ուժ է դառնում նրանց կյանքում: Օրինակ՝ Վարդանանց պատերազմը հայերի համար, Կուլիկովյան ճակատամարտը ռուսների համար: Պատմական հիշողությունը դաստիարակում է քաղաքացիական որակներ: Հնարավորություն է տալիս կողմնորոշվելու ներկայի բարդ իրադրություններում:

Պատմությունը և ընդհանրապես հումանիտար գիտությունները սերունդներին դաստիարակում են մարդկայնության, բարու, արդարության ոգով: Պատմական փորձը մարդու և հասարակության ինքնագիտակցման ու ինքնաճանաչման միջոց է:

Մարդու և հասարակության պատմության առարկան ու հիմնական գործառույթները ներկայացնելուց հետո առանձնակի հետաքրքրություն է ձեռք բերում պատմական գիտելիքի բնույթի, առանձնահատկություն-ների պարզաբանման հարցը: Մենք այն կփորձենք բացահայտել՝ հակիրճ ներկայացնելով պատմական գիտելիքներ ձեռք բերելու հիմնական մեթոդները: Մեթոդներ, որոնք շատ պատմաբաններ օգտագործում են իրենց ուսումնասիրություններում:

Բարոյական վարքի ձևավորման համար պահանջվում է հատուկ ուշադրություն նվիրել բարոյական սովորությունների դաստիարակությանը, որոնցից են աշխատելու, ընկերական օգնություն ցույց տալու և կենսականորեն կարևոր այլ սովորություններ, որոնք նպաստում են անձի բարոյական որակների զարգացմանը:

2020 թվականը կրթական համակարգի համար առանձնապես դարձավ տեխնոլոգիական նորամուծությունների փորձարկումների և նախադեպը չունեցող մարտահրավերների դիմագրավման տարի: Կորոնավիրուսի փորձությունը դեռ չհաղթահարած՝ կրթական համակարգը ստիպված էր դիմագրավել պատերազմին: Այդ օրերին գիտակցվեց կրթության, որպես գոյության առաջնահերթ պայմանի անհրաժեշտությունը և ակնհայտ դարձան տարիներ ի վեր թույլ տրված բացթողումներն ու թերացումները:

Ռազմահայրենասիրական կոչերով ոգեշնչված մեր զինվորն իր արյան գնով պաշտպանեց հող հայրենին: Փաստորեն, մենք կրկին ապավինեցինք միայն մեր զինվորի բազկի ուժին՝ մոռանալով ամենակարևորի մասին, որ հերոսների արյամբ սրբագործված մեր հայրենիքի սահմաններն անհրաժեշտ էր պահել կրթված հասարակություն ձևավորելով և խելամիտ ու հեռանկարային դիվանագիտություն վարելով:

Դեռևս 1991-1994 թթ-ի Արցախյան պատերազմից հետո անհրաժեշտ էր գիտակցել, որ պատերազմները վերաբերում են ոչ միայն բանակներին, այլ նաև՝ պետություններին: Սակայն այս իրողության առաջ մոտ 30 տարի մեր պետությունն ու հասարակությունը աչք էին փակել:

Վերոնշյալի համատեքստում խիստ մտահոգիչ է դարձել նոյեմբերի 9-ի տխրահռչակ փաստաթղթի ապագա մեկնաբանումը հայոց պատմության դասագրքերում: Տարիներ շարունակ մայիսի 9-ի հաղթանակը տոնախմբած մեր հասարակությունը և հատկապես երիտասարդությունը այսօր կանգնած է նաև լուրջ հոգեբանական մարտահրավերի առաջ: Անգամ պատերազմի օրերին սովորողների մոտ անընդունելի ու խորթ էր հաղթողի կարգավիճակի փոխակերպումը: Այս մասին է վկայում սեփական փորձը: Եվ այս պարագայում ոչինչ չէր մնում, քան անցյալի հաղթական պատմությամբ սերնդին կրթելը:

Փյունիկի պես վերածնվող հայ ժողովուրդը Ցեղասպանությունից ընդամենը երեք տարի անց դժվարին պայմաններում ստեղծեց պետականություն ու փոխանցեց մեզ: Ուստի, 21-րդ դարի տեխնոլոգիական ռեսուրսները հնարավորություն են ընձեռում արագ ինքնակազմակերպվել: Միաժամանակ անհրաժեշտ է ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ սերտել այլևս պատմություն դարձած այս պատերազմի դասերը, այն պայմանով, որ չպետք է թերագնահատել թշնամուն և խույս տալ իրականությունից:

Պատահական չէ, որ պատերազմի օրերին մեր սովորողների մոտ մեծացավ Հայոց պատմության տարբեր հարցերի շուրջ հետաքրքրությունն ու հետևողականությունը:

Վերոնշյալի համատեքստում արդիական են դառնում մերօրյա հերոսների մասին պատումները, որոնք պետք է ներառվեն առաջիկա տարիներին հրատարակվելիք դասագրքերում, և որոնց վրա այս ընթացքում մի տեսակ ստվեր է ընկել: Դրանք մեծապես կօգնեն մատաղ սերնդի բարոյահոգեբանական վիճակի բարելավմանը, ավելին՝ պարտվածի բարդույթը կփոխարինվի մարտնչած հերոսի կերպարով, որը մինչև արյան վերջին կաթիլն իր հաղթական պայքարն է մղել թշնամու դեմ:

Ուստի, անհրաժեշտ է մշակել պատմության դասավանդման նոր մարտավարություն և շարժվել նոր պահանջներով: Մեր կրթական համակարգում թիրախային է լինելու որակի բարձրացման պահանջը: Ստեղծված իրավիճակում հաջորդ առաջնահերթ նպատակը պետք է դառնա գիտելիքահեն տնտեսության ձևավորումը, որը հնարավորություն կտա մեր ունեցած գիտական ներուժը պահել ու ծառայեցնել ի շահ հայրենիքի:

Եզրակացություն

Յուրաքանչյուր պետություն ունի իր օրենքներն ու կանոնները, իր ավանդույթներն ու սովորույթները կրթության ու դաստիարակության հարցում, և դրանք մեծ մասամբ հիմնված են ամուր ընտանիք և ամուր պետություն ունենալու գաղափարախոսության վրա:Կրթվել և դաստիարակվել ազգի սովորույթներին ու ավանդույթներին համապատասխան, վայելել ուսուցիչների սերն ու հարգանքը, դառնալ տվյալ ժամանակի բանավեճերի իմաստուն խորհրդատուն, տիրապետել անհրաժեշտ գիտելիքների բոլոր բնագավառներում, լինել կայուն և ինքնակառավարվող մարդ, սիրել ու հարգել ընտանիքը, ապրել և գործել ընտանիքի ու պետության համար. այս ամենը դրված են բարոյական արժեքների հիմքում: Բոլոր ժամանակներում կրթությունն ու դաստիարակությունը գնահատվել է մարդկանց կողմից: Բայց առավել կարևոր է բարոյական գիտակցության դաստիարակությունը:

Այս աշխատանքում մենք խոսեցինք բարոյական նորմերի ու բարոյական դաստիարակության խնդիրների մասին «Հայոց պատմության» դասերին, անդրադարձանք այդ գործում մանկավարժական մոտեցմանն ու մեթոդներին և եկանք այն եզրահանգման, որ՝

- Բարոյական նորմերը ստեղծվել են դարերի ընթացքում և դարձել են ազգային ինքնագիտակցության հիմքը, ավելի հզոր ուժ ունեն, քան իրավաբանական օրենքները:
- Պատանիների շրջանում բարոյական նորմերի դաստիարակությունը երկար ժամանակ պահանջող գործընթաց է, դրա համար մանկավարժի խոսքն ու գործը պետք է համընկնեն:
- Բարոյական նորմերը ազդում են պատանիների արժեքային համակարգի ձևավորման վրա:

Ուսումնասիրության ընթացքում եկանք այն եզրահանգման, որ ուսուցչի դերը,առավել ևս «Հայոց պատմություն» առարկան դասավանդող ուսուցչի,կրկնակի անգամ կարևոր է ներկայիս պայմաններում, մեր օրերում, այս օրհասական պահին: Այս խնդրի լուծմանը առավել շատ նպաստում է հատկապես վերջին

պատերազմների հերոսների սխրանքների, վարքի, դրսևորած արիության մեկնաբանությունը, վերլուծությունը, մանրակրկիտ անդրադարձը նրանց բարոյական կերպարին: Վառ օրինակների առկայությունը հատկապես լավ են ընկալվում երեխաների կողմից, դառնում նմանակման վառ օրինակ, բարոյականության, արիության, բարեպաշտության մարմնավորում,որին ձգտում են նմանվել պատանիները, դեռահասները: Ուսուցչի համար շատ կարևոր է ճիշտ,գրագետ ներկայացնել մերօրյա հերոսների կատարած սխրագործությունների արժեքը, թե որքան կարևոր է և արժեքավոր լինել լավ մարդ, լավ քաղաքացի, հայրենակից մեր պետության, մեր Հայրենիքի ապագա գոյության, զարգացման,բարգավաճման համար: Այս ամենը ուսուցչի մեծ առաքելությունն է

Օգտագործված գրականության ցանկ

1. Պատմության առարկան, գործառույթները եվ հիմնական մեթոդները Ալբերտ Ղազարյան. http://www.ysu.am/files/04A_Ghazaryan-1513940436-.pdf,
2. Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Եր. 2000,
3. Ղուկասյան Ա., Հայոց պատմություն 8-9 ուսուցչի ձեռնարկ. Եր., 2013,